




ԳՐԱԿԱՆ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — ՉԱՏՄԱԿԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

1843-1897 ՀԱՏՈՐ ԾԵ 09-08-09

ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԳԻՏԱԲԱՆՈՒԹԵԱՆ

(Շար. տես յէջ 176)

արամեական լեզուն, այլ նա եւ իրակայ\* մէջ մուտ գործելով՝ խափաներ էր տեղւոյն հին բնիկ ասորաբաբելական լեզուն: Փոքր Ասիոյ մէջ, ինչպէս կ'ապացուցուի գրամներէն, պարսիկ նախարարը պաշտօնական լեզուի կարգը դասեր էին դաշն: Սակայն տեղացի հայկական աւանդութիւնն այս մասին ազդեցութիւն

ԵՏ զօրաւոր ազդեցութեան, զոր հայ ղեցաբաժնութեան վերայ ըրեր է իրանի մուսուր զարգացումն, հարկ է ի նկատի առնուլ նա եւ գլխաւորապէս ասորական ազդեցութիւնը: Պարսկական շրջանին մէջ, ո՛չ միայն յաշխարհին Ասորւոց եւ ի վերին Միջագետս գործածական էր

\* Ոմանք համարեցան թէ իրակ ուրիշ բան չէ՛րայց իրան ամուսն, այդ մեծ առաջ Արաբացեաց բիրամը. (հմմտ. *Nouv. Journ. Asiat.* 3<sup>e</sup> série, XI. 1841, p. 658). սակայն սխալ է այդ կարծիքը: Աշխարհագիրը ընդհամրապէս կը միաբանին յայտ, թէ իրակ ամուսն կը տրուէր յԱրաբացեաց այն կողմերուն կամ մահմանդներուն, որոնք կը գտնուին Պարսկական ծոցոյ միջինասիական եւ հիւսիս-արեւմտեան կողմը: Այդ մահմանդներէն մին, որ կը գտնուի Եփրատ եւ Տիգրիս գետոց ըստորին հոսանքին մէջտեղ, եւ կը կոչուի *Մեդիա-յապէս* արաբական իրակ (*Irak al-Arabi*), կը համապատասխանէ հին աշխարհին Բաբելոնացի եւ